ՄԻ ՁԵՌԱԳԻՐ ԱՒԵՏԱՐԱՆ

(Սեպհականութիւն Ռաֆայէլ Սթոռայի այժմ Զիկագոյի Համալսարանի Մատենադարանում)

Մագաղաթ, անցման երկաթագիր, մեծութիւնը 16x20x7 սմ.: Մի մի թերթ չգրած մագաղաթ սկզբից եւ վերջից: Առաջին եօթ թերթը տարբեր մագաղաթ, եօթ մանրանկարներով, մի մի երեսի վերայ նկարուած:

1բ. Աւետումն, (պատ. 1) սրածայր կամարի տակ, որի կեդրոնից լապտեր է կախուած, ասել է ներքին տեսարան: Հրեշտակը կարմիր ծիրանի է ձգած ուսերին, իսկ տակից հագել է լայնաթեւ, կանաչ զգեստ, ձախ ձեռքին խաչագլուխ գաւազան, բռնած ուսին. աջով խաչակնքում է, ողջունի նշան: Մարիամ նստած է, լուսոյ պսակը կարմիր, գլխի լաչակը գորշ, ծալքերը կարմրաւուն, սեղանի վրայ ջրաման: Երկուսի մէջ է կախուած լապտերը: Կամարի յետեւից՝ աջ եւ ձախ կողմից՝ մի մի չէնք, ձախի չէնքը հայկական զմբեթով տաճար է, վեղարի հիմքից վարագոյներ կախուած, իսկ աջից երկյարկանի սիւնազարդ սրահ:

Պատկերի մեծ. 23x20 սմ., մի մասով 13 սմ., ուրեմն անկանոն:

2ա. Ծնունդը. (Պատկ. 1) երեք տեսարանով պատկեր. առաջինը վերեւից ներքեւ, դարձեալ սրածայր կամարի տակ, ծնունդն է, մայրը, երեխան եւ երկու կենդանիները: Երկրորդը մոգերի երկրպագութիւնը, երկու հրեշտակի ուղեկցութեամբ, մէկը առաջից, մէկը յետեւից, տարօրինակ է, որ նրանք հանդիպում են մանկան լոգանքի ժամանակ Սալոմէի ձեռքով ըստ անվաւեր աւետարանների: Ուշադրութեան արժանի են նրանց գլխարկները, կօշիկները, հագուստն առ հասարակ, որ Զաքարեանց շրջանի զգեստն էր, որի մասին խօսք կը լինի յետոյ: Յովսէփ ա-



Պատկեր 1. Աւետումն եւ Ծնունդ